

կարծելով որ երբ «մնութիւն» բառն արտասանուի, միշտ «երկու մնութիւն» պիտի ըսուի, նոյն իսկ «Արեւագալ»-ի ժամերգութեան մէջ՝ ի դէմս Ամենասուրբ Երրորդութեան երգուած «Երեք անձինք»-ին կը կցէին «եւ երկու մնութիւն»: Սարգիս շատ աշխատեցաւ զիրենք հաշտ պահելու, խրատելով եւ սորվեցընելով: Այստեղ Սարգիս երկու տարի տենդէ բռնուեցաւ. յետոյ թեմը պտրտելու ելաւ, եւ Գաղատիա դառնալով՝ քաղաքը նոյն պառակտման մէջ գտաւ: Գարձեալ ամենայն ճգամբ աշխատեցաւ զիրենք հաշտեցընել, եւ տեսնելով որ իր երեք տարւոյ աշխատութիւնը չկրցաւ զիրենք փոխել, եւ նոյն միջոցին Պոլսէն լուր առնելով որ կոլոտ Պատրիարք մահացու հիւանդ է, 1740ին փութաց ի Վ. Պոլիս:

Սարգիս Արքեպ.ին ի Գաղատիա անցուցած օրերուն վրայ Աւգերեան Ստեփան Եպ. հետեւեալը կը հաղորդէ, (էջ 94—96, թէպէտ ժամանակագրական սխալով, փոխանակ կոլոտի՝ Յակոբ Պատրիարքի հրամանաւ Գաղատիա գացած կը համարի:) «Երբ ուղղափառները Գաղատիոյ չորս եկեղեցիները գրաւեցին, եւ ասիկայ Վ. Պոլիս լսուեցաւ, Յակոբ Պատրիարք Սարաֆ օղու Սարգիս վարդապետը ղրկեց Գաղատիա: Իբրեւ փոխանորդ եկաւ Սարգիս Վ., տեսաւ որ գործերը տակնուվրայ են, վանքը բնակող վարդապետներուն գրեթէ ամէնքն ուղղափառ, ինչպէս նաեւ չորս եկեղեցիներուն Տէրտէրները. նմանապէս ժողովուրդը համարձակու-